Action funded by the European Union

EU4Environment

Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Republic of Moldova, Ukraine

Հայաստան

Կանաչ տնտեսության զարգացմանն ընդառաջ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի 2019-2020թթ. ընթացիկ աշխատանքները

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի 2019-2020թթ. ընթացիկ աշխատանքները

ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրը 2019թ.-ից աջակցում է Հայաստանին և Արևելյան գործընկերության (ԱԼԳ) մյուս հինգ երկրներին՝ իրականացնելու կանաչ վերափոխմանն ուղղված նպատակները: Ծրագիրն օգնում է երկրներին պահպանել իրենց բնական կապիտալը, բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցության մակարդակը՝ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված գործողություններին աջակցման, «կանաչ» աճի հնարավորությունների բացահայտման և ցուցադրման, ինչպես նաև բնապահպանական ռիսկերի և ազդեցությունների արդյունավետ կառավարման մեխանիզմների սահմանման միջոցով:

2020թ.-ին ՔՈՎԻԴ-19-ի համավարակը զգալիորեն ազդեց աշխատանքների իրականացման վրա: Չնայած այս աննախադեպ գլոբալ մարտահրավերին՝ Ծրագիրն իրականացրեց նախատեսված գործողությունները և ձեռք բերեց կոնկրետ արդյունքներ:

Այս բրոշյուրում ներկայացվում են 2019 2020թթ.-ին «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները և Հայաստանում ու տարածաշրջանային մակարդակով ձեռք բերված կոնկրետ արդյունքները:

«Կանաչ» տնտեսությանը նպաստող որոշումների կայացում

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ուղեցույցների մշակում, ներառյալ անդրսահմանային համատեքստում. Ուղեցույցներն օգնում են ազգային շահագրգիռ մարմիններին ՇՄԱԳ փաստաթղթերի պատրաստման և գնահատման, «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» Էսպոյի կոնվենցիայի և համապատասխան ազգային օրենսդրության կիրառման գործում:
- Կանաչ տնտեսության քաղաքականության մշակման թեմայով խորացված վերապատրաստման դասընթաց. Հատուկ առցանց դասընթացին մասնակցեցին ինը քաղաքացիական ծառայողներ: Նրանք սովորեցին գնահատել ու վերլուծել կանաչ տնտեսության, կայուն սպառման և արտադրության մոտեցումները, ինչպես նաև ընդգրկել դրանք ազգային և ոլորտային քաղաքականությունների ու ռազմավարական ծրագրերի մեջ:

ԻՍԿ ԴՈՒՔ ԳԻՏԵՔ, որ, ըստ ԵՄ-Հայաստան 2017 թվականի Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) Հայաստանը պարտավորվում է իրականացնել ԵՄ շուրջ 65 հրահանգներին համապատասխան ազգային օրենսդրության մոտարկման գործընթաց: Այն նպատակաուղղված է թափոնների կառավարման և աղբավայրերի շահագործման համապատասխանությանը ԵՄ ստանդարտներին՝ իրականացնելով 2017-2036թթ. Կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությունը:

Շրջանաձև տնտեսություն և աճի նոր հնարավորություններ

- Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) շրջանում էկոլոգիապես մաքուր արտադրության խթանում. Պլաստիկի և ձկնարտադրության ոլորտների 14 ՓՄՁ-ներ իրենց գործունեության մեջ ներդրում են էկոլոգիապես մաքուր արտադրական գործընթացներ՝ նպաստելով Ռեսուրսների արդյունավետության և մաքուր արտադրության (ՌԱՄԱ) ցուցանիշների բարելավմանը:
- ՌԱՄԱ միջոցառումների իրականացման մոնիթորինգ. Վերլուծության ընթացքում հնարավոր եղավ բացահայտել այն ընկերություններին, այդ թվում՝ «ԷԼԲԱՏ» ՓԲԸ-ն և «Լուկաշին գյուղատնտեսական ասոցիացիա» կոոպերատիվը, որոնք ավելի արդյունավետ են օգտագործում հումքը և կրճատում են էներգետիկ, ջրային ռեսուրսների օգտագործման, թափոնների և արտանետումների ծավալները:
- Արդյունաբերության ոլորտում ՌԱՄԱ ցուցանիշների գնահատման թեմայով դասընթացներ. Մի շարք մարզչական վեբինարների միջոցով հայաստանյան փորձագետներին տրվեցին գիտելիքներ ու գործիքներ պլաստիկի արտադրության, ձկնարտադրության և արդյունաբերական այլ ոլորտներում ՓՄՁ-ների էկոլոգիական արդյունավետության գնահատման համար:
- ՌԱՄԱ-ի շրջանակներում էներգետիկ կառավարման համակարգի թեմայով վերապատրաստում. Վերապատրաստման ընթացքում վերհանվեցին մսամթերքի և շոկոլադի արտադրության, մետաղների վերամշակման ՓՄՁ-ներում առկա էներգետիկ կառավարման խնդիրները: Մասնագիտական քննարկումներ ծավալվեցին էներգետիկ փորձաքննության վերաբերյալ՝ ցուցադրելով ՌԱՄԱ մեթոդաբանության կիրառումը:
- Կանաչ արտադրության զարգացման մեջ գենդերային բաղադրիչի ընդգրկում. Հայաստանում տեղի ունեցած դասընթացի ընթացքում քննարկվեց՝ ինչ դեր ունեն կանայք ՓՄՁ-ների կառավարման գործընթացում և ինչպես ուժեղացնել նրանց ներգործությունը ՓՄՁ-ների կանաչ գործունեության վրա:

ԻՍԿ ԴՈՒՔ ԳԻՏԵՔՔ, որ Հայաստանի պլաստիկ թափոնների կրճատման նոր ռազմավարական ծրագրի արդյունքում նվազել է «ԱՐՄԵՆԻԱ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի նման ընկերությունների արտադրանքների պահանջարկը: «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի հայաստանյան ՌԱՄԱ թիմի հետ համագործակցության շնորհիվ ընկերությունը մշակում է էկոլոգիապես մաքուր բիզնեսի ռազմավարություն:

Էկոհամակարգային ծառայություններ և կենսապահովման միջոցներ

- Կենսաբազմազանություն և կայուն անտառտնտեսություն: 2020թ.-ի վերջին Եվրոպական միության և Համաշխարհային բանկի միջև ստորագրվեց համաձայնագիր, որի հիման վրա վերջինս 2021թ.-ին «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի հետ կիրականացնի համատեղ գործողություններ: Աշխատանքներն ուղղված կլինեն վեց ԱԼԳ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում էկոհամակարգային ծառայությունների և կենսապահովման միջոցների բարելավմանը: Դրանք կնպաստեն Զմրուխտե ցանցի (էմերալդ ցանցի) ամրապնդմանը և գոյություն ունեցող պահպանվող տարածքների կառավարմանը: Բացի դրանից, կխթանեն նաև անտառների արդյունավետ պահպանումն ու կայուն օգտագործումը, ապօրինի առևտրի կանխումը, կանաչ ֆինանսավորման նոր գործիքների մասին իրազեկության բարձրացումը, որի նպատակն է ապահովել անտառների և էկոհամակարգային ծառայությունների կայուն կառավարումը:

Էկոլոգիական «խաղի պայմաններ»

- ՓՄՁ-ների կանաչ գործունեության արդյունավետության գնահատում. ՓՄՁ քաղաքականության ցուցիչի գնահատումները ցույց տվեցին, որ 2016թ.-ից հետո Հայաստանն առաջընթաց է գրանցել ՓՄՁ-ների կանաչ գործունեության առումով՝ ՓՄՁ-ների պետական աջակցության տարեկան ծրագրի մեջ ներառելով ՓՄՁ-ների կանաչ գործունեությանն ուղղված աջակցությունը: Այդուհանդերձ, լավ կլինի, որ մեկ կազմակերպություն ստանձնի ՓՄՁ-ների կանաչ գործունեության խթանման պատասխանատվությունը:
- ԵՄ առկա լավագույն տեխնոլոգիաների վերաբերյալ վկայակոչված փաստաթղթերի կիրառելիությունը Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի թափոնների նկատմամբ. Աշխատանքների նպատակն է գնահատել՝ ԵՄ առկա լավագույն տեխնոլոգիաների վկայակոչված փաստաթղթերի կիրառումը հանքարդյունաբերական թափոնների նկատմամբ որքանով կբարելավի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական վիճակը՝ մասնավորապես Սյունիքի մարզում:
- Հայաստանում բնապահպանական պահանջների կատարման ապահովման համակարգի ամրապնդում. Վերլուծության նպատակն է վերհանել բնապահպանական պահանջների կատարման ապահովման համակարգի թերությունները և ներկայացնել դրա բարելավմանն ուղղված առաջարկություններ:
- Հանածո վառելիքի սուբսիդիաների վերաբերյալ 2010-2019թթ. տվյալների գույքագրում՝ ՏՀԶԿ/Միջազգային էներգետիկ գործակալության տվյալների շտեմարանում ընդգրկման համար. ՏՀԶԿ/Միջազգային էներգետիկ գործակալության՝ հանածո վառելիքի սուբսիդիաների վերաբերյալ տվյալների բազայում Հայաստանի և ԱլԳ մյուս երկրների տվյալների ընդգրկումը կարևոր քայլ է տվյալ բնագավառում թափանցիկության բարձրացման համար: Այդպիսով ԱլԳ երկրների կառավարությունները նաև բացահայտ ներկայացնում են իրենց երկրներում էներգետիկայի ոլորտին ուղղված պետական աջակցության ծավալները:
- Մինչև 2030թ. կլիմայի փոփոխության գործողությունների ներդրումային կարիքների գնահատում. Արդյունքներն օգտագործվում են Ֆինանսների նախարարության հետ քննարկելու այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ կլիմայական նպատակների իրագործման համար ֆինանսական միջոցների համախմբումը, ներդրումների պլանավորումը և կապիտալի հայթայթման սխեմաների մշակումը:
- Կանաչ պարտատոմսերի շուկայի հնարավորությունների բացահայտում. Աշխատանքները ներառում են կանաչ պարտատոմսերի օգտագործման հնարավորությունների վերլուծություն՝ ցածր ածխածնային և կայուն տնտեսության համար լրացուցիչ միջոցների հայթայթման նպատակով:
- Շրջակա միջավայրի ոլորտում վարչական կարողությունների զարգացում. Վերլուծությունն ուղղված է կանաչ տնտեսության զարգացման վարչական կարողությունների գնատմանը, բացերի վերհանմանը և բարեփոխումների վերաբերյալ առաջարկների ներկայացմանը:

ԻՍԿ ԴՈՒՔ ԳԻՏԵՔ, որ ԱլԳ երկրների, այդ թվում՝ Հայաստանի հանածո վառելիքի սուբսիդիաների վերաբերյալ 2010-2019թթ. տվյալներն ընդգրկված են ՏՀԶԿ/Միջազգային էներգետիկ գործակալության հանածո վառելիքի սուբսիդիաների և ՏՀԶԿ կանաչ աճի ցուցանիշների տվյալների բազաներում: Օրինակ՝ 2018թ.-ին Հայաստանում հանածո վառելիքին ուղղված աջակցությունը կազմում էր համախառն ներքին արդյունքի 0.04%-ը: Պետական աջակցությունն ամբողջությամբ ուղղվել է հանածո վառելիքի սպառողներին: **https://stats.oecd.org/**

Հայաստանում ՔՈՎԻԴ-19-ի արձագանքման «կանաչ» միջոցառումները

2020 թվականը հատկանշական էր ՔՈՎԻԴ-19-ի աննախադեպ գլոբալ մարտահրավերով, որն ազդեց ամբողջ աշխարհի բնակչության առողջության և սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Տրանսֆերտների նվազումը, որը տեղի ունեցավ համավարակով պայմանավորված սահմանափակումների և միգրանտներ ընդունող երկրներում գործազրկության աճի հետևանքով, բացասական ազդեցություն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա, որտեղ տրանսֆերտները կազմում են համախառն ներքին արդյունքի 11%-ը: Ոչ ֆորմալ հատվածի ավելացումը (ընդհանուր զբաղվածության 52.1%-ը) էլ ավելի սրեց համավարակի սոցիալ-տնտեսական ազդեցությունը: Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատականների համաձայն՝ 2020թ.-ին կանխատեսվում էր Հայաստանի ՀՆԱ-ի մինչև -4.5% անկում՝ համեմատած 2019թ.-ի 7.6%-ի հետ, իսկ 2021թ.-ին՝մինչև 3.5%: Բացի դրանից, մինչև 22.3% գործազրկության աճ էր կանխատեսվում 2020թ.-ի համար և 21.1%՝ 2021թ.-ի համար՝ համեմատած 2019թ.-ի 18.9% -ի հետ:

Տնտեսության անկումը կանխելու նպատակով՝ Հայաստանն արտակարգ միջոցառումներ ձեռնարկեց համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման ուղղությամբ: Այդ միջոցառումներից մի քանիսը, որոնք բերված են ստորև, նպաստում են բնապահպանական նպատակների իրագործմանը:

- Ծառատնկում, աշխատատեղերի ստեղծում: Հայաստանում ընդունվեցին 21 պետական աջակցության ծրագրեր՝ միջոցառումների լայն շրջանակով, որի նպատակն էր ՔՈՎԻԴ-19-ի համավարակի ընթացքում աջակցել տնտեսվարող սուբյեկտներին ու բնակչության խոցելի խմբերին: Ծրագրերից մեկն ուղղված էր անտառապատման միջոցով զբաղվածության ապահովմանը: Գետերի երկայնքով ուռենիներ տնկելու և տնկիների տարածքը ցանկապատելու դիմաց աշխատողները վաստակեցին օրական մինչև 10 000 դրամ (մոտ 16 եվրո): Ծրագրի արդյունքում ակնկալվում է առվազն 1 000 սեզոնային աշխատատեղերի ստեղծում: 2020թ.-ի հունիսի 1-ի դրությամբ ավելի քան 2 միլիոն տնկի էր տնկվել:
- Տնտեսության վերականգնման ծրագրի մեջ «կանաչ» միջոցառումների ներառում: Հայաստանը դիմել է Ազգային մակարդակով սահմանված ներդրումների գործընկերությանը (NDC Partnership), որպեսզի վերջինս աջակցի ՔՈՎԻԴ-19-ի վերականգնման փաթեթում կանաչ միջոցառումների ընդգրկման հարցում: Այդ կապակցությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը 12 ամսով կտրամադրվի ավագ տնտեսական խորհրդատու:

Սոցիալ-տնտեսական ենթատեքստ

Բնակչություն, 2019թ ՝ 2.958 մլն
Իրական ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, 2019թ ՝ 12 024 ԱՄՆ դոլար 2015



- Կանաչ տեխնոլոգիաների ներդրման համար ՓՄՁ-ներին օժանդակում: Համավարակի ընթացքում Եվրոպական միությունը, համագործակցելով այնպիսի բանկերի հետ, ինչպիսիք են՝ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկը և ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ը, լրացուցիչ միջոցներ հատկացրեց՝ ՓՄՁ-ներին հատուկ պայմաններով վարկեր և դրամաշնորհներ տրամադրելու համար՝ հատկապես կանաչ տեխնոլոգիաների ներդրման նպատակով:
- Նոր հնարավորություններ գյուղատնտեսության համար: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՎԶԵԲ-ի Գործարարության աջակցման գրասենյակի և Ներդրումների աջակցման կենտրոնի հետ համատեղ, կազմակերպեց «Գործարարությունն ընդդեմ ՔՈՎԻԴ-19-ի» թեմայով վեբինարներ: Դրանցից մի քանիսը վերաբերում էին գյուղատնտեսության ոլորտին, մասնավորապես՝ բույսերի մշակմանն ու պահպանությանը, գյուղատնտեսության զարգացման նոր հնարավորություններին, հիդրոպոնիկ բույսերի աճեցմանը, որն ավելի քիչ ջուր է պահանջում և պակաս վնասակար է հողի համար:

Հայաստանում վերոնշյալ միջոցառումների իրականացմանն աջակցելու նպատակով՝ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրն առցանց խորհրդատվություն անցկացրեց ՀՀ պետական պաշտոնյաների հետ: Մասնակիցները վերլուծեցին երկրի իրավիճակը՝ ՔՈՎԻԴ-19-ի լույսի ներքո, և քննարկեցին ինչպես կարելի է «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի գործողությունները համատեղել ճգնաժամի «կանաչ» հաղթահարման հետ:

Տարածաշրջանային գործողություններ

- ՌԷԳ-ի և անդրսահմանային ՇՄԱԳ-ի կիրառմանը նվիրված ենթատարածաշրջանային աշխատաժողով: ԱլԳ երկրների, այդ թվում՝ Հայաստանի շրջակա միջավայրի պահպանության պետական մարմինների ավելի քան 40 ներկայացուցիչներ փորձի փոխանակում կատարեցին շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ազգային համակարգերի մշակման բնագավառում: Նրանց նաև տրվեց ուղեցույց և հատուկ վերապատրաստում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործիքների և միջազգային հաջողված փորձի կիրառման վերաբերյալ:
- Տեսանյութ՝ Անդրսահմանային ՇՄԱԳ ընթացակարգեր/«Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» Էսպոյի կոնվենցիա: Տեսանյութը խթանում է ՇՄԱԳ ընթացակարգերի և ԱլԳ երկրներում դրա հետ կապված օգուտների մասին իրազեկվածությունը:
- Բնապահպանական կառավարման համակարգերի (ԲԿՀ) թեմայով տարածաշրջանային վերապատրաստում: Վերապատրաստման դասընթացին մասնակցեցին ԱլԳ երկրների ավելի քան 50 փորձագետներ: Ավստրիական շոկոլադ արտադրողի օրինակի հիման վրա մասնակիցները դիտարկեցին արտադրության ամբողջ ցիկլը՝ կակաոյի հատիկներից մինչև վերջնական արտադրանքի ստացումը: Նրանք նաև մշակեցին ԲԿՀ-ի հիմնական փուլերը՝ շահագրգիռ կողմերի վերլուծությունից մինչև համապատասխանության ապահովման չափորոշիչները:
- Էկոարդյունաբերական պարկերի գործունեությանը նվիրված տարածաշրջանային աշխատաժողով: ԱլԳ և Կենտրոնական Ասիայի երկրների ավելի քան 140 ներկայացուցիչներ իրականացրին էկոարդյունաբերական պարկերի գործունեության վերլուծություն: Դրա համար նրանք կիրառեցին միջազգային լավագույն փորձը, որը ներառում է՝ պարկերի բնակիչների սոցիալ-տնտեսական և էկոլոգիական ցուցանիշների բարելավում, ռեսուրսների արդյունավետության և շրջանաձև տնտեսության խթանում, պատասխանատու բիզնես գործունեության նորարարական ուղիների ստեղծում:
- Առկա լավագույն տեխնոլոգիաների (ԱԼՏ) վերաբերյալ տարածաշրջանային սեմինար: Սեմինարի ավելի քան 50 մասնակիցները գնահատեցին ԱլԳ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում ԱԼՏ մոտեցումների կիրառման արդյունավետությունը: Ուսումնասիրելով ԱԼՏ-ների կիրառման բնագավառում գործընկեր երկրների և ԵՄ անդամ պետությունների փորձը՝ նրանք քննարկեցին նաև մարտահրավերներն ու ձեռքբերումները:
- Բնապահպանական պահանջների կատարման ապահովման բնագավառում ռիսկերի վրա հիմնված մոտեցումների կիրառման թեմայով տարածաշրջանային սեմինար: Ավելի քան 50 պաշտոնյաներ ու փորձագետներ, այդ թվում նաև Հայաստանից, կատարեցին փորձի փոխանակում և ծանոթացան ԵՄ և ԱլԳ երկրներում բնապահպանական պահանջների կատարման ապահովման բնագավառում ռիսկերի վրա հիմնված մոտեցումների կիրառման լավագույն փորձին: Սեմինարին մասնակցեցին նաև Բնապահպանական օրենսդրության կիրարկման (ԲՕԿ) ԵՄ ցանցի ներկայացուցիչները:
- «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» տարածաշրջանային ասամբլեայի երկու հանդիպումները, որոնց ընթացքում գնահատվեց «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի իրականացման արդյունավետությունը, և համաձայնություն ձեռք բերվեց գործողությունների պլանների վերաբերյալ: Հանդիպումները նաև հարթակ տրամադրեցին տարածաշրջանային մակարդակով գիտելիքների և լավագույն փորձի փոխանակման համար:

ԻՍԿ ԴՈՒՔ ԳԻՏԵՔ,
որ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրը բարելավել է իր կայքը: Այն այժմ ամփոփ տեղեկատվություն է տրամադրում ԱլԳ երկրներում կանաչ քաղաքականությունների իրականացման վերաբերյալ:

2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրն ուներ տեղեկագրի 329 բաժանորդ և սոցիալական ցանցերի 150 000 հետևորդ:

Բաժանորդագրվեք մեր ամսական տեղեկագրին և հետևեք մեզ Ֆեյսբուքում:.

Հայաստանի կանաչ աճի ցուցանիշները: Ի՞նչ են դրանք մեզ ասում:

1

Էկոլոգիական ցուցանիշների և ռեսուրսների արդյունավետություն Որքան բարձր է CO2-ի արտանետումների կրճատման և էներգետիկ արդյունավետությունը, այնքան քիչ է աղտոտված տնտեսությունը, բարձր է ռեսուրսների արդյունավետությունը, իսկ կլիման ու շրջակա միջավայրը բարենպաստ են:



2

Կյանքի որակի էկոլոգիական ցուցանիշը Որքան փոքր է մանր մասնիկների ազդեցությունը, այնքան օդը մաքուր է, մարդիկ առողջ են, և կառավարության ծախսերը քիչ են:



3

Բնական ծագում ունեցող ակտիվներ Բնական ռեսուրսների կայուն պաշարների առկայությունը երաշխավորում է դրանց կայուն օգտագործումը, որը կարևոր է կանաչ տնտեսության կայացման համար:



4

Տնտեսական հնարավորություններ և դրանց ուղղված քաղաքականություններ Հանածո վառելիքի սուբսիդիաների չեղարկումը կարող է հանգեցնել հարկաբյուջետային դեֆիցիտի կրճատման, վերականգնվող էներգիայի մրցունակության բարձրացման, ածխածնի արտանետումների և օդի աղտոտվածության նվազման:



Action funded by the European Union

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի մասին

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրը մեկ ընդհանուր ռազմավարական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կանաչ տնտեսությանը նպաստող որոշումների կայացում, կայուն տնտեսություն և կանաչ աճ, «խելացի» բնապահպանական կանոնակարգեր, էկոհամակարգերի պահպանություն և գիտելիքների փոխանակում:

- Բյուջե՝ շուրջ 20 մլն եվրո վեց ԱԼԳ երկրների համար (որից 19.5 մլն եվրոն՝ ԵՄ-ի ֆինանսավորմամբ)
- Իրականացման ժամկետ՝ 2019-2022թթ.
- Իրականացնող կազմակերպություններ՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ), ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողով (ՄԱԿ ԵՏՀ), ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր (ՄԱԿ ՇՄԾ), ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն (ՄԱԿ ԱԶԿ), Համաշխարհային բանկ
- Ընդհանուր ղեկավարումը՝ Եվրոպական հանձնաժողով
- Հայաստանում հիմնական գործընկերները՝ Շրջակա միջավայրի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի համառոտ ակնարկ. ԱԼԳ երկրները 2020թ.-ին

Մեր նոր վեբ կայքը ունի 7 000 դիտում, հոկտեմբերի կեսերին գործարկումից ի վեր

Վերապատրաստվել է ավելի քան 250 ՌԱՄԱ փորձագետ

Ավելի քան 190 մասնակիցներ վերապատրաստվեցին ՌԷԳ - ի վերաբերյալ

Ավելի քան 100 մարդ անցել է Կանաչ տնտեսության նոր դասընթաց

Ավելի քան 90 ՓՄՁ-ներ գնահատում են ՌԱՄԱ- ն որպես ՔՈՎԻԴ -19-ի վերականգնման միջոցառումների մաս



Հետևեք մեզ՝

www.eu4environment.org/

www.facebook.com/EU4Environment-100539842031096

www.youtube.com/channel/UCi1GrwqTT-WJ30ztZMPq3xw

www.flickr.com/photos/182351066@N07

http://eepurl.com/gUNbg1

Կապ

eu4environment@oecd.org

Դիսքլեյմեր. Այս Երկրի նկարագիրը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Այստեղ արտահայտված տեսակետները որևէ կերպ չեն արտացոլում Եվրոպական միության, նրա անդամների կամ Արևելյան գործընկերության երկրների կառավարությունների պաշտոնական կարծիքը: Այս փաստաթուղթը և այստեղ ներառված ցանկացած բովանդակություն չեն խախտում որևէ տարածքի կարգավիճակը կամ ինքնիշխանությունը, միջազգային սահմանները, որևէ տարածքի, քաղաքի կամ շրջանի անվանումը:

Աղբյուրներ՝ ՏՀԶԿ վիճակագրական տվյալներ՝ կանաչ աճի ցուցանիշների վերաբերյալ (բնակչություն, իրական ՀՆԱ, տնտեսական կառուցվածք, ԿԱՑ-ներ), Համաշխարհային բանկի տվյալների բազա (տրանսֆերտներ), ԱՄՀ-ի համաշխարհային տնտեսական հեռանկար (ՀՆԱ և գործազրկության կանխատեսումներ), ՏՀԶԿ փաստաթուղթ՝ «ԱԼԳ երկրներում ՔՈՎԻԴ-19-ի արձագանքումը» (տրանսֆերտներ, ոչ ֆորմալ հատված, արդյունահանվող նյութերի վերաբերյալ տվյալներ, ՔՈՎԻԴ-19-ի արձագանքման կանաչ միջոցառումներ), Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) փաստաթուղթ՝ «Կանանց և տղամարդկանց դերը ոչ ֆորմալ տնտեսության մեջ. վիճակագրական պատկեր» (ոչ ֆորմալ հատված), «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի ազգային խորհրդատվությունների ժամանակ երկրների ներկայացուցիչների կողմից առաջարկված միջոցառումները (ՔՈՎԻԴ-19-ի արձագանքման կանաչ միջոցառումներ), ծրագրի ազգային համակարգողների և ծրագրի իրականացնող գործընկերների ներդրումները:

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP